acba

# ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2025թ. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2025թ. 3-րդ եռամսյակի զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Հակոբ Անդրեասյան | Գլխավոր գործադիր տնօրեն | | 13.11.2025թ. |
| Ստյոպա Զաքինյան | Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-Ֆինանասական տնօրեն | | 13.11.2025թ. |
| Արմեն Հակոբյան | Գլխավոր հաշվապահ | | 13.11.2025թ. |

**«ԱԿԲԱ ԲԱՆԿ»**

**բաց բաժնետիրական ընկերություն**

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

# 2025 ԹՎԱԿԱՆ

# «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

# 2025թ. 3-րդ եռամսյակի

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ և իր դուստր ընկերությունների (այսուհետ՝ Բանկ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ակտիվները կազմել են 985.4 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճելով 53.7 մլրդ ՀՀ դրամով կամ 5.8%-ով:

Բանկի ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկել հաճախորդներին տրամադրված վարկերին (ներառյալ ֆինանսական լիզինգը)՝ 30.09.25թ.-ի դրությամբ կազմելով ակտիվների շուրջ 71.2%-ը: Բանկի վարկային պորտֆելը նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճել է 72.6 մլրդ ՀՀ դրամով կամ 11.5%-ով՝ 30.09.25թ.-ին կազմելով 701.9 մլրդ ՀՀ դրամ: Նշենք, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Բանկի կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը ընդհանուր պորտֆելում կազմել է 77.4%:

Բանկի դրամական միջոցները (կանխիկ դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ Կենտրոնական Բանկում և այլ թղթակից Բանկերում) 30.09.25թ.-ի դրությամբ կազմել են 120.1 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 12.2%-ը:

Բանկի պարտավորությունները նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճել են 33.6 մլրդ ՀՀ դրամ -ով՝ 30.09.25թ.-ին կազմելով 801.9 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների պորտֆելը 30.09.2025թ. դրությամբ կազմել է 573.7 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, հաճախորդների տեղական արժույթով ցպահանջ և ժամկետային ավանդների պորտֆելի կշիռը ընդհանուր ավանդային պորտֆելում կազմել է շուրջ 66.9%-ը: Ավանդների կառուցվածքն ըստ ժամկետայնության հետևյալն է. ժամկետային ավանդները կազմել են ավանդային պորտֆելի 54.6%-ը, իսկ ցպահանջ ավանդները՝45.4%-ը:

Միաժամանակ ՀՀ Կենտրոնական բանկի և Կառավարության, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները 30.09.25թ.-ին կազմել են 162.3 մլրդ ՀՀ դրամ:

30.09.25թ.-ի դրությամբ Բանկի կապիտալը կազմել է 183.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճելով 20.1 մլրդ ՀՀ դրամով:

## Եկամուտների և ծախսերի հիմնական ցուցանիշներ

Բանկի զուտ տոկոսային եկամուտները 30.09.2025թ.-ի դրությամբ կազմել են 48.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ աճելով 22.1%-ով:

Դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների, Ֆինանսական վարձակալության գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է 72.0 մլրդ ՀՀ դրամ: Ներդրումային գործառնություններից տոկոսային եկամուտը կազմել է 6.1 մլրդ ՀՀ դրամ:

Միաժամանակ, միջնորդավճարների գծով եկամուտ կազմել է 13.4 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի ցուցանիշը 19.7%-ով:

Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտները կազմել են 5.4 մլրդ ՀՀ դրամ:

Արդյունքում Բանկի զուտ գործառնական եկամուտները, նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ, աճել են 8.8 մլրդ ՀՀ դրամով ՝ կազմելով 36.0 մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր վարչական և այլ գործառնական ծախսերը կազմել են 25.8 մլրդ ՀՀ դրամ: Բանկի աշխատակիցների քանակը 2025թ.-ի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 1877:

Բանկը 2025թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում ունեցել է 2.7 մլրդ ՀՀ դրամ զուտ մասհանում:

Արդյունքում, 2025թ.-ի երրորդ եռամսյակի արդյունքով Բանկն ունեցել է 26.6 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Բանկի ակտիվների շահութաբերությունը դիտարկվող ժամանակահատվածի արդյունքներով կազմել է 3.7%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 20.4%:

## Մրցակցային դիրքի վերլուծություն

30.09.2025թ.-ի դրությամբ ՀՀ-ում գործել են 17 առևտրային բանկեր, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է շուրջ 550, իսկ աշխատակիցների ընդհանուր թիվը շուրջ 17 000 մարդ:

2025թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգում արձանագրվել է ակտիվների 8.8% աճ, վարկային պորտֆելի 15.8% աճ, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 6.4% աճ և կապիտալի 14.2% աճ: Նույն ժամանակահատվածում, Բանկը արձանագրել է հետևյալ ցուցանիշները. ակտիվների աճ՝ 5.8%-ով, հաճախորդներին տրված վարկերի աճ՝ 11.5%-ով, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների նվազում 1.8%-ով և կապիտալի աճ 12.3%-ով:

2025թ.-ի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ակտիվների գծով Բանկի մասնաբաժինը կազմել է 8.2%, վարկերի գծով ՝ 9.7%, իսկ ավանդների գծով՝ 8.4%:

Ստորև ներկայացված են Բանկի հիմնական մրցակցային առավելությունները:

- *Կապիտալիզացիայի բարձր մակարդակ:*

30.09.25թ.-ի դրությամբ բանկի կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 20.2 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 183.6 մլրդ ՀՀ դրամ՝ բանկային համակարգում զբաղեցնելով 4-րդ տեղը: Բանկի առաջին մակարդակի կապիտալի և ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 20.6% և 23.4% բավականին բարձր լինելով մրցակից բանկերի միջին ցուցանիշից:

## Վարկանիշ

2025 թվականի փետրվարին, հեղինակավոր Fitch վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) վերահաստատել է ԱԿԲԱ ԲԱՆԿ-ին շնորհած «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» (Long-Term Issuer Default Rating») «BB-» վարկանիշը, ինչպես նաև վերահաստատել բանկի կենսունակության վարկանիշը («bb-», Viability Rating):

Fitch-ի կողմից հրապարակված հաշվետվությունում նշվում է, որ Ակբա բանկի ակտիվների որակը և ֆինանսական կայունությունը շարունակում են մնալ բարձր:

## Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա տարիներին Բանկի ծառայությունները կթիրախավորեն հաճախորդների չորս հիմնական սեգմենտների՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մեջ հատկապես կարևոր տեղ է հատկացվում վարկային ներդրումներին, որոնք իրականացվում են Հայաստանի ողջ տարածքում:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է հիմնական ավանդների կայուն բազայի ընդլայնումը: Բանկը կշարունակի ավելացնել ցպահանջ և ժամկետային ավանդները ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Բանկը շարունակաբար

թողարկում է պարտատոմսեր՝ իր հաճախորդներին առաջարկելով խնայողության այլընտրանքային պրոդուկտ, ինչն իր հերթին կնպաստի կապիտալի շուկայի զարգացմանը ՀՀ-ում: Առաջիկա տարիներին բանկը նախատեսում է շարունակել պարտատոմսերի թողարկման գործընթացը՝ թողարկելով և՛ դրամային, և՛ արտարժութային պարտատոմսեր: Ավանդների բազայի, այդ թվում նաև ՀՀ դրամով ավանդների ծավալների աճի առաջնայնությունը թելադրվում է նաև բանկի ակտիվների, մասնավորապես վարկային ներդրումների նախատեսված աճով:

Հաճախորդների անընդհատ զարգացող պահանջները բավարարելու և մրցակցային առավելություն ապահովելու նպատակով ֆինանսական համակարգը ենթարկվում է զգալի փոփոխությունների: Համաձայն միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների՝ հաշվի առնելով ֆինանսական ոլորտում տեղի ունեցող զարգացումները, հաջորդ տասնամյակի ընթացքում բանկերը առերեսվելու են մի շարք նորարարական մարտահրավերների, որոնց վրա էական ազդեցություն կունենան հետևյալ գործոնները՝ հաճախորդների նոր տեսակի պահանջմունքների ձևավորումը, ֆինանսական ոլորտում մեքենայական ուսուցման, արհեստական բանականության, ռոբոտացման և ավտոմատացման կիրառումը, ֆինանսաբանկային կազմակերպությունների կենտրոնացումը թվային բանկային փորձի և ամբողջական թվայնացման վրա, կիբեռանվտանգությունը, ինչպես նաև կանաչ բանկինգը:

Վերոնշյալ գործոնները էական ազդեցություն ունեն նաև հայաստանյան բանկային համակարգի վրա: Սույն գործոններով պայմանավորված մարտահրավերներին դիմակայելու և դրանց շնորհիվ մրցակցային առավելություն ստանալու համար Բանկի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները:

Տարիներ առաջ Բանկում մեկնարկած թվային փոխակերպման շրջանակներում իրականացրած տարբեր նախագծերի արդյունքում արդեն իսկ ունենք ներդրված և հաջողությամբ կիրառվող տարբեր գործիքներ մարքեթինգի, հաճախորդների հետ

հարաբերությունների և ընկերության ֆինանսական գործարքների կառավարման համար: Բանկում շարունակվելու են նոր համակարգերի և գործիքների ներդրումը, որոնք արդեն իսկ ներդրվածների հետ միասին՝ որպես մեկ միասնական և փոխկապակցված համակարգ, հնարավորություն կտան Բանկին իր բիզնես գործընթացները համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին և բարելավել Բանկի դիրքը շուկայում: Զուգահեռաբար, ներքին գործընթացների արդյունավետության բարձրացման և ծախսերի կրճատման նպատակով՝ Բանկը շարունակելու է կիրառել ռոբոտացման և ավտոմատացման, ինչպես նաև արհեստական բանականության և մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը՝ հատկապես էական ռեսուրսատար գործընթացներում: Սա թույլ կտա նվազեցնել մարդկային սխալների հավանականությունը, արագացնել գործարքների կատարումը և ապահովել ավելի բարձր արդյունավետություն:

Մեքենայական ուսուցման և արհեստական բանականության կիրառումը նաև կնպաստի մեծ ծավալի տվյալների արագ և ճշգրիտ վերլուծությանը, ինչը հնարավորություն կտա բացահայտել հաճախորդների կարիքները և օգտագործել այդ տեղեկատվությունն անհատականացված սպասարկում տրամադրելու, հաճախորդներին աջակցելու և թիրախային լուծումներ առաջարկելու գործում: Բանկը լայնորեն կիրառում է վերոնշյալ տեխնոլոգիական հնարավորությունները և ներդնում դրանք տարբեր գործընթացներում: Այս տեխնոլոգիաների կիրառությամբ հնարավոր կլինի պատկերացնել այնպիսի ապագա, որտեղ տվյալների վրա հիմնված որոշումները կարող են կայացվել իրական ժամանակում, իսկ հաճախորդները հասկացված լինել աննախադեպ մանրամասնությամբ՝ փոխելով բանկի և հաճախորդի հարաբերությունները:

Թվային բանկինգի զարգացումը համարվում է Բանկի առաջընթացի հիմնաքարերից մեկը: Շարունակելով թվային հարթակների բարելավումն ու զարգացումը՝ Բանկը նպատակ ունի հաճախորդներին ապահովել իրենց կյանքի տարբեր փուլերում անհրաժեշտ տարատեսակ բանկային և ոչ բանկային ծառայություններին

հասանելիություն մեկ վայրից: Acba digital բջջային և վեբ հարթակների միջոցով հաճախորդներին հնարավորություն է ընձեռնվում հեշտ, արագ և արդյունավետ օգտվել բանկային ծառայություններից ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ: Այս տեսանկյունից Բանկը շարունակելու է զարգացնել իր թվային հարթակների ֆունկցիոնալ հնարավորությունները և ավելացնել նոր ծառայություններ՝ բարելավելով հաճախորդների փորձառությունը և ապահովելով ավելի արագ, հարմարավետ ու ամբողջական ֆինանսական կառավարում՝ նաև կիրառելով և տրամադրելով տարբեր վերլուծական գործիքներ: Այսպես, Բանկի ուշադրության կենտրոնում են հաճախորդների փոփոխվող կարիքներին համապատասխան ժամանակակից լուծումների ներդրումը, թվային հարթակների անընդհատ զարգացումը՝ միտված հաճախորդների սպասարկման որակի բարելավմանը և հարմարավետության բարձրացմանը:

Բանկը առաջիկա տարիներին շարունակելու է նաև վարկավորման գործընթացի ավտոմատացման, կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ գործունեությունը: Ուշադրության կենտրոնում են թվային հարթակներով վարկերի և վարկային գծերի դիմելու և տրամադրման հնարավորությունների զարգացումը: Ներդրվելու են նոր պրոդուկտներ, ինչպես նաև թիրախային հաճախորդների տարբեր սեգմենտներին միտված նպատակային առաջարկներ: Բանկը, ամրապնդելով իր առաջատար դիրքը շուկայում, կընդլայնի նաև քարտերի տրամադրման և սպասարկման ծավալները ՀՀ ողջ տարածքում, ինչին զուգահեռ կշարունակի ընդլայնել քարտերով տրամադրվող վարկային գծերի ընդհանուր ծավալը, որոնք կառաջարկվեն ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կազմակերպություններին:

Թվայնացման անբաժան մաս է տեղեկատվական և կիբերանվտանգության համակարգերի զարգացումը՝ հաճախորդների և Բանկի տվյալների անվտանգությունն ապահովելու համար: Կիբեռանվտանգության ապահովումը Բանկի համար շարունակում է մնալ կարևորագույն ուղղություններից մեկը: Հաշվի առնելով այն, որ առօրյայում թվային տեխնոլոգիաների կիրառման մեծացմանը զուգընթաց աճում են նաև կիբեռսպառնալիքները, անհրաժեշտություն է առաջանում մեծացնել տեղեկատվական

անվտանգության շրջանակը, կանխատեսել սպառնալիքների զարգացման ուղղությունները և կանխարգելման գործիքներ կիրառել՝ կանխելու վտանգը մինչև դրա առաջանալը: Բանկը, ելնելով իր որդեգրած քաղաքականությունից, այս ոլորտում նույնպես հանդիսանում է առաջամարտիկներից մեկը և տարբեր պաշտպանական համակարգերի կիրառման զուգահեռ նաև գործողություններ է իրականացնում՝ բարձրացնելու աշխատակիցների և հաճախորդների տեղեկացվածության մակարդակը:

Կանաչ բանքինգ գաղափարը շարունակում է ունենալ զարգացման միտումներ, որի մասին վկայում են ոլորտում կարևորագույն դեր ունեցող հաստատությունների կողմից կիրառվող մոտեցումները՝ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակները» մուտք են գործել բանկային օրակարգ, միջազգային խոշոր ֆինանսական կառույցները (EBRD, EFSE, GGF, KFW և այլն) իրենց հետ համագործակցության պայմաններում ներառում են Կայուն զարգացման չափանիշները: Պետական մակարդակում ևս նախատեսվում է սահմանել կայուն զարգացման նվազագույն չափանիշներ: Ինչպես նաև ԿԲ հրապարակել է Հայաստանի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը, որն ուղղորդելու է ֆինանսական հատվածի մասնակիցներին ներդնել ԲՍԿ (բնապահպանական, սոցիալական և կառավարման) սկզբունքներն իրենց բիզնես որոշումների մեջ: Բանկում ընթանում է միջազգային փորձին համապատասխանող ԲՍԿ ստանդարտների ներդրման գործընթացը: ԲՍԿ չափանիշների ներդրման համար իրականացվող քայլերը երկարաժամկետ են և հետևաբար, այս ուղղությամբ Բանկը շարժվելու է փուլային մոտեցմամբ՝ համաձայն մշակվող ճանապարհային քարտեզի: Արդեն իսկ մշակված Կանաչ վարկերի ընթացակարգը և Կանաչ պարտատոմսերի համակարգը նախատեսվում է ներդնել առաջիկայում: Այս ուղղությամբ շարժվելով՝ Բանկը հնարավորություններ կունենա գրանցել նոր ձեռքբերումներ և էլ ավելի մեծ մասշտաբով ներդնում ունենալ իր առաքելության՝ հասարակության կայուն զարգացման գործում:

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2024 թվականի ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարների հետ կապված անորոշությունները շարունակել են պահպանվել նաև 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում՝ պայմանավորված տարածաշրջանային ռազմաքաղաքական լարվածությամբ և Հայաստանի հիմնական առևտրային գործընկերների հետ առևտրաշրջանառության ծավալների նվազմամբ: Մասնավորապես՝ 2025 թվականի երրորդ եռամսյակում նվազել են առևտրատնտեսական համագործակցության ծավալները, ինչը բացասական ռիսկեր է ստեղծում Հայաստանի տնտեսական ակտիվության համար: Միևնույն ժամանակ.

**Արտաքին առևտրաշրջանառության մասով**

Ըստ ՀՀ ՎԿ-ի՝ 2025թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ արտաքին եւ փոխադարձ առեւտրի առևտրաշրջանառության ծավալը նվազել է շուրջ 39.3%-ով, ինչի մեջ իր նշանակալի ազդեցությունն է ունեցել ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառության ծավալի ավելի քան 50.5 տոկոս նվազումը:

**ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված փոխանցումների մասով**

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ 2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ֆիզիկական անձանց կողմից ՀՀ բանկերի միջոցով ՌԴ-ից ստացված և ՌԴ փոխանցված դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դոլարային արտահայտությամբ աճել է շուրջ 27 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՀ ՏԱՑ-ը գրանցել է 7.6% աճ, իսկ ծառայությունների և շինարարության ծավալները աճել են համապատասխանաբար 9.9%-ով և 20.7%-ով: Ի

թիվս վերոնշյալների՝ տարեկան աճ է գրանցել նաև տնտեսությունում առևտրի շրջանառության ծավալը՝ 3.5%:

2025թ. երրորդ եռամսյակում պահպանվել է հարաբերականորեն կայուն գնաճային միջավայր և 12-ամսյա գնաճը կազմել է 3.7%:

Համաձայն EIU 2025թ. երրորդ եռամսյակի գնահատականների՝ առաջիկա 3 տարիներին ՀՀ ՀՆԱ իրական աճը կկազմի համապատասխանաբար 4.7%, 4.4% և 4.1%*

## ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2025թ. երրորդ եռամսյակում Բանկը գործել է սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի արժեքը գերազանցել է ինչպես ներքին, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմը: Բանկի ռիսկով կշռված ակտիվների գերակշիռ մասի աղբյուր է հանդիսանում վարկային ռիսկը, ինչը պայմանավորված է գործունեության հիմնական ուղղվածությամբ:

Բանկի չաշխատող ակտիվների ցուցանիշը 2025թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.61 տոկոս՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի վերջի ցուցանիշի նկատմամբ նվազելով 0.09 տոկոսային կետով: Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումների մակարդակը՝ ըստ տնտեսության ճյուղերի և խոշորագույն հաճախորդների, գտնվել է սահմանված նպատակակետերի շրջանակներում: 2025թ. երրորդ եռամսյակի վերջին իրականացված սթրես թեստերի արդյունքներով վարկային ռիսկի մեծությունը գտնվել է ընդունելի մակարդակում՝ հաշվի առնելով սթրեսային իրավիճակի հնարավոր ազդեցության և վերջինիս ի հայտ գալու հավանականության համադրությունը:

Economic Intelligence Unit (EIU) One-Click Report Armenia, April 25th, 2025

## ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկի շուկայական ռիսկի հիմնական աղբյուրներն են արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը:

2025թ. երրորդ եռամսյակի ընթացքում, ԿԲ-ի կողմից սահմանվող Վերաֆինանսավորման տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ՝ կազմելով 6.75%:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը դրսևորել է ցածր տատանողականություն, իսկ Եվրո/ՀՀ դրամ և ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքները ունեցել է առավել բարձր տատանողականություն՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ և միջազգային ֆինանսական շուկաներում դոլարի փոխարժեքի նկատմամբ եվրոյի արժույթի ուժեղացմամբ:

Արտարժութային ռիսկի պահպանողական քաղաքականությունից ելնելով՝ եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթների գծով էական բաց դիրքեր չեն պահվել: ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը հիմնականում եղել է երկար, սակայն գտնվել է Բանկի կողմից ընդունելի մակարդակում:

2025թ. երրորդ եռամսյակի ընթացքում արտարժույթի վերագնահատումից Բանկը ստացել է որոշակի շահույթ: Պարբերաբար իրականացվող սթրեսային սցենարների արդյունքում արտարժույթի վերագնահատումից հնարավոր կորուստները չեն գերազանցել սահմանված ռիսկի ախորժակի մեծությունները:

## ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2025թ. երրորդ եռամսյակի ընթացքում Բանկը պահպանել է իրացվելիության բարձր և հուսալի մակարդակ, ինչն արտացոլվում է իրացվելիության նորմատիվների՝ ՀՀ ԿԲ սահմանած սահմանաչափերից զգալիորեն բարձր ցուցանիշով: Նույնիսկ արտաքին միջավայրից եկող անորոշությունների պարագայում Բանկի ավանդային պորտֆելի գծով

բացասական միտումներ չեն դիտվել: Հարկ է նշել, որ ընդհանուր պարտավորությունների կազմում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը կազմում է 58.5%:

Իրացվելիության աղբյուրների դիվերսիֆիկացման նկատառումներից ելնելով՝ Բանկը միջոցներ է ներգրավվում նաև միջազգային ֆինանսական կառույցներից, ինչպիսիք են ՎԶԵԲ, Proparco, Symbiotics, Triodos, EFSE և այլն:

Ավելցուկային իրացվելիության պաշարներն ուղղվում են ցածր ռիսկային ներդրումային գործառնությունների իրականացմանը, մասնավորապես՝ պետական պարտատոմսերում ներդրումների իրականացում, միջբանկային վարկերի տրամադրում, հակադարձ ռեպո գործարքների իրականացում և այլն: Բանկի ներդրումային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում առավել բարձր իրացվելիություն ունեցող ՀՀ պետական պարտատոմսերը՝ կազմելով պարտատոմսերի պորտֆելի մոտ 96.4%:

Համաձայն Բանկի իրացվելիության սթրես թեստերի արդյունքների՝ Բանկի իրացվելիության մակարդակը գնահատվել է բավարար:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Բանկի վարկային քաղաքականության հիմքում դրված է շրջակա միջավայրի և սոցիալական պատասխանատվության հայեցակարգը, որի շրջանակներում արգելվում է շրջակա միջավայրի վրա չափազանց բարձր ազդեցություն ունեցող գործունեության և նախագծերի ֆինանավորումը:

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են Գործառնական ռիսկի միջադեպերի կառավարման գործուն մեխանիզմները և մշտական հսկողության համակարգի առկայությունը:

2021թ.-ից իրականացվում է Բանկի բոլոր գործընթացների վերլուծություն՝ ուղղված պոտենցիալ ռիսկերի բացահայտմանը: Պարբերաբար իրականացվում է Գործառնական

ռիսկերի քարտեզի վերանայում՝ հիմնված նոր գործընթացների և գործընթացներում իրականացվող փոփոխությունների ուսումնասիրության, ռիսկերի բացահայտման վրա:

2022թ.-ից ստեղծվել և վարվում է գործառնական միջադեպերի բազա, որը հնարավորություն է տալիս արդյունավետորեն վերլուծել, գնահատել և բացահայտել առավել ռիսկային գործընթացները, վաղաժամ ահազանգեր ստանալ գործառնական ռիսկի միջադեպերի գծով, բարելավել ռիսկի զսպման մեխանիզմները և առավել թիրախային դարձնել մշտական հսկողության համակարգը: Ինչպես նաև Գործառնական միջադեպերի բազայում ներառված փաստացի պատահարների/միջադեպերի հիման վրա վերանայվում են նաև գործառնական ռիսկերի քարտեզում ներառված ռիսկերը, դրանց գնահատականները, և վերահսկողական գործիքակազմերը: Բանկում մշակվող հսկողական գործառույթների ավտոմատացման և հաշվետվական համակարգը նպատակ ունի բարձրացնել հսկողության արդյունավետությունը, կրճատել աշխատատարությունը և նպաստել պոտենցիալ գործառնական ռիսկերի վաղաժամ հայտնաբերմանը ու կանխարգելմանը:

Բանկի համար էական գործառնական ռիսկերի շարքին է դասվում տեղեկատվական անվտանգության ռիսկը: Թվային տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ տեղեկատվական անվտանգությունը հանդիսանում է ֆինանսաբանկային համակարգի առաջնային մարտահրավերներից: Բանկը էական ներդրումներ է իրականացնում տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման համար՝ ներդնելով ժամանակակից անվտանգության համակարգեր:

Բանկի տեղեկատվական համակարգերում ներթափանցման փորձերի կանխարգելման նպատակով՝ պարբերաբար իրականացվում է Բանկի տեղեկատվական համակարգերի ներթափանցման թեստավորում (Penetration testing)՝ համագործակցելով աշխարհի առաջատար կազմակերպությունների հետ, որը հնարավորություն է տալիս վաղաժամ հայտնաբերել Բանկում խոցելիությունները և կանխարգելել դրանք: Բանկում պարբերաբար իրականացվում է համակարգերի ներթափանցման թեստավորում՝ օգտագործելով նաև ներքին ռեսուրսները:

Հարկ է նշել նաև, որ Բանկը տարիներ առաջ ներդրել է ISO/IEC27001:2022 ստանդարտին համապատասխան տեղեկատվական անվտանգության համակարգ, որը հավաստված է համապատասխան սերտիֆիկատով և իրականացվում է ստանդարտի պահանջներին համապատասխանության պարբերական վերահաստատում արտաքին աուդիտի կողմից: Բանկը սերտիֆիացվել է նաև ISO/IEC 27701:2019 Անձնական տվյալների կառավարման համակարգի հավաստագրով, ինչը Բանկում տվյալների մշակման գործընթացը դարձրել է էլ ավելի ապահով ու կայուն և միջազգային լավագույն փորձին ու պահանջներին համապատասխան: